

Այս շինուածքներէն յետոյ երկու նշանաւոր աւերակներ եւս կան, որ են Բաղանիքն ու Շաղկոցաձորի շուկայն:

Բաղանեաց շինութիւնը քաղաքին հարապյին-արեւելեան անկիւնին մօտ է, մեծ՝ երկայն քառակուսի ձեւով: Սորա աւերակաց համար կասէ Պ. Մուրավեօվ «Բոլորաձեւ» (Ա. Փրկիչ) եկեղեցիէն դէպ հարաւ երթաւու ժամանակնիս, մեծ աւերակի մի մօտէն «անցանք», որ սովորաբար Բաղանեաց աւերակներ կասուի, թէպէտ եւ աւելի կնշանէր «պալատի կամ եկեղեցոյ», որ ժամանակով «միացած մէկ ընակարան եղած կերեւին»: Բայց յետոյ կարծիքով կառելցընէ թէ «Գուցէ Սարգիս Կաթուղիկոսին հայրապետական աթոռը Անի փոխադրած ժամանակին «որբոց Հռիփսիմեանց անունով կանգնած մարմարիոնէ մատուռին աւերակն է»: Որքան եւս Պ. Մուրավեօվի կարծիքը հաւանական լինի, մեր պատմագրաց վկայութեանցը նայելով՝ անհիմն կերեւի մեզ. վասն զի նոռքա ոչ թէ միայն Բաղանեաց աւերակ է սելով գրել ու անցել են, հապա շատերը հետաքննութեամբ ստուգել են, եւ կպատմեն թէ նորա լայնութեան մէկ փոքրիկ կողմին վերայ երկու նեղ սրահներ շինուած են եղել լրւացուղաց նատելու կամ հագուստները դնելու համար. եւ միւս ընդարձակագոյն մասը հինգ բոլորակ բաժնուած է եղել, այսինքն չորսը չորս անկիւններուն վերայ շինուած, եւ հինգերորդը՝ որ սենեկաց բաժան-

մանց մէջ ամենէն մեծն է՝ մէջ տեղը կտմարակապով բարձրացուցած է, եւ շատ գուներ ունեցել է ուրիշ միւս սենեակներէն այն տեղը մանելու համար: Բաց յայսմանէ կհաստատեն թէ լուացուելու աւազաններն ու ջրի ծորակները մինչեւ ցայժմ կերեւին. «Մնան ցարդ ծորակը աւազանաց լուալեացն»:

Խոկ Շուկայն Շաղկոցաձորին երկու դարիվարի երեմներուն վերայ (որոց մէջէն կակուղ քար կերնէ) փորուած կրպակներն են զսնազան ձեւերով ու մեծութեամբ. ոմանք պատուհան չունին ու մութ են, եւ ոմանք մէկ կողմէն կամ երդիքէն լոյս կառնուն: Կան նաև երկու կարգ փորուած կրպակներ, որոց վարի կարգը գիւրաւ կարելի է մտնել, իսկ վերինը շատ դժուարութեամբ: Սոցա շատին մէջ գարաններ ու խորշեր կերեւին, բայց ընդհանրապէս բնութենէն ու հնութենէն կամ սոցանէ աւելի մեր բիւրաւոր թշնամեաց անագորոյն ձեռքէն մաշուած ու աւերուած են: Շուկայէն զատ քաղաքին մէջ տեղ տեղ գուրեր կամ՝ մարգաչափ կամ աւելի խորութեամբ, որք կարաններու կամ շտեմարանաց տեղեր կկարծուին, եւ որք պարապ կամ աւերակաց բեկորներով ու հասարակ քարերով լցուած են: Կամ նաև ուրիշ փոքրիկ աւերակաց հետքեր, որ աւելորդ համարեցինք այս տեղս գնել:

Քաղուած ի Տեղագրութենէն Անոյ

ՅՈՎԱՆՆՈՒ ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ,

1862 Ա.Ռ. „Ա.Դ.Ա.Ի.Ն.Ի.Ն. Մ.Ա.Ա.Ե.Ա.Յ.“.

Տար Աղաւնեակ եւ զայս վերջին իմ թերթիկ
Այն Հայկազմնց որ թըռչանիդ փափաքին,
Ծերոյս յետին բարեւ՝ յետին համբուրիկ
Տուր այն ձեռաց որ քեզ սիրով գրգուեցին:
Ես յաջորդիս թողում պաշտօն գեղեցիկ
Լի աւետեօք սըփուել թըղթեր հայ մարդկանց,
Թէ ձեր ազգին սիրոյն լինչ քիրան որ հեղիք
Մարգարտազարդ թագ ձեւացաւ գեղապանձ.
Թէ ձիթենեաց լեռն ուր արիւն ցողեցիք,
Զեղ փըրկութեան կարմիր վարդեր վըթթեցան.
Թէ ուր որ սէր եւ միութիւն ցանեցիք
Տեսէք նըքան եւ լինչ բարիք ծաղկեցան:
Թող ամէն հայ քաջալերուի յուսով լիք
Ցորչափ տեսնէ վրզիդ մանեակ Շիածան: